ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ N 9/3

ք. Երևան 26 մայիսի 2022 թ.

«ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է՝

1. «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգի (հաստատված ԵՊՀ գիտխորհրդի 04.05.2017 թ. թիվ 7 նիստում) 4.6 կետում ներկայացված օրինակի վերջին նախադասությունում «Եթե ուսանողը պարտ-քերի մարման շրջանում չի հաղթահարում նվազագույն 8 միավորի շեմը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նախորդ անբավարար միավորը, տվյալ օրինակի դեպքում՝ 7» նախադասությունը փոխարինել «Եթե ուսանողը պարտքերի մարման շրջանում չի հաղթահարում դրական նվազագույն 8 միավորի շեմը, բայց բարձրացնում է գնա-հատականը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նոր միավորը» նախադասությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ